

ՆՈՐՈՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՑՈՍ

ՂՐԵ. ՈՂՁ

Table with 2 columns: Subscription type and price. Includes 'Գանձիկի համար' (50), 'Վեցամսեայ' (30), 'Շրջակայից' (60), 'Վեցամսեայ' (35).

Table with 2 columns: Subscription type and price. Includes 'Սահմանափակ շատր' (18), 'Վեցամսեայ' (11).

Table with 2 columns: Subscription type and price. Includes 'Ռոստոմ եւ Կովկասի շատր' (7), 'Վեցամսեայ' (4).

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԻՒՆ Ե ՆԻ ԲՂԵՍՏԱՐԻ ԾԱԽԲԸ ԹԵՐԻՔԻՆ ՎՈՐԶՈՒՄԵՆ ՎՐԱՅ Ի

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԿՆՈՐ ՕՐԻՒ

ՆԱՄԱԿ ԿԱՍ ՈՍԵԷ ԲՂԵՍՏԱՐԻ ԳԵՏՔ Ե ՈՒՂՆԱԿ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Ձեռագիրներն եւ չեն գործարար

ԱՐՑՈՆԱՏԵՐ Ժ. ՄԻՆԻՆԻԷ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇՈՐԱԹ ՕՐԵՐԸ

ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԱՊՐԻԼ 25/8 ՄԱՅԻՍ 1901

ՔՍԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 87

ՄԵՐ ՕՂԵՍՈՒՆԵՐԸ

« Ինչո՞ւ համար սա մեր օղի՞ն Պարոններուն և աղաներուն համար ալ բան մը չէք գրեր «Նոր-Օր»ի մէջ » կ'ըսէին անցեալ երեկոյ՝ վարդապետ երկու օրիորդներ՝ երբ խօսակցութիւնն ինչ կը դառնար աղալոյս սրճարանս մը և կամ օղեմով երիտասարդներու թերութիւնները ուղղելու մէկ միջոցին վրայ

— Իրաւունք ունիք, օրիորդներ, և թոյլ տուէք ինձ որ անկեղծօրէն զընահատեմ Ձեր այդ խորհրդու եղանակը ի լուր ընթերցողաց, սրովհետեւ պատահած եմ մեր մէջ օրիորդներու գրականութեամբ զբաղող, զետուութեան վրայ խորհող, բանաստեղծի մը բնարը թրթուացնող, բայց հազուադէպ ըլլալով պատահած եմ օրիորդի մը որ հետաքրքրուի ու խորհի հարցի մը վրայ որ կը շօշափէ ընկերական կեանքը, ինչպէս Ամերիկուհին:

Այդ օղիին հարցը առաջի օրէն իմ մտքին մէկ անկիւնը կարծես բոյն գրած է: Ամէն անգամ որ երոպական թերթներու մէջ կը կարդամ ալ՝ զօրով մի, ծխախոտի գործածութեան վերջապէս ժողովրդի առողջապահութեան առթիւ չահեկան յօդուածներ այս ինչ այն ինչ բժշկին կողմէն ստորագրուած, կը զարմանամ և կը ցաւիմ թէ ինչո՞ւ մեր բժիշկներն ալ իրենց հանրային գործունէութեան ապացոյցը չեն ուղեր տալ, ինչպէս իրենց օտար արուեստակիցները:

Ինչ և է, նախորդ թուով խոստացած էինք այս մասին՝ երբ մեր յառաջիկայ թիւին մէջ խօսելու ըլլանք մանրամասնօրէն կը բացատրենք:

Վերադառնալով մեր նիւթին՝ իրաւ է թէ խմբագիր մը օղիի գործածութեան յարուցած վնասներուն վրայ կրնայ յօդուած մը խմբագրել, բայց մի հաւատար որ բժիշկ չեղող խմբագրի մը ստորագրած այս տեսակ յօդուածը բժիշկի մը կամ մասնագէտի մը զրչէն ելած ձեռագրերուն համը հոտը կունենայ: Բժիշկը կրնայ անանկ արուեստական գոյնը տալ իր յօդուածին, որ ուղղակի դիմացինին սրտին, թորերուն հետ կը խօսի, զը

րածը պարզապէս անոր ուղեղին վերայ կ'ազդէ: Ատոր համար է որ չեմ ուղեր յառակնութիւնը անենալ՝ ըստորագրելու յօդուած մը որ իմ իրաւասութենէս վեր է: Բայց և այնպէս մինչև որ մեր հրատարակին վրայ վայելող բժիշկները՝ արթնան իրենց բունէն, ու մեր դիտողութիւններէն զգացուին, թոյլտուութիւն կունենամ երկու բառ արտասանել մեր օղի՞ններուն հասցէին:

Յաճախ Առաջնորդարան երթալու առիթը ունեցողները անշուշտ նշմարած են որ՝ Պէնի-Սուրբ-Յիւրի ճամբուն վրայ և շրջակայները՝ հայ զինեւորներով լեցած են, որբան օղեմով այնքան օղեառն:

Գործաւոր, արուեստաւոր ևն. ամէն երեկոյ հոնտեղուանքը ժամագրութիւն կրնեն իրենց օրուան վաստակած վատնելու օղիին՝ ու զրկելով իրենց ընտանիքը հացէ ջուրէ շատ անգամ:

Միայն հացէ ջուրէ չեն զրկեր, խեղճերուն քունը և հոնտեղուան ալ կը վրդովեն, կէս գիշերներուն տուն երթալով, Ասոնց մէջ կան անանկ անզգայ թիփեր որ ոչ միայն իրենց ընտանիքին հանգիստը կը վրդովեն, հապա կը վրդովեն նաև հանրութեան հանգիստը: Նոյն ինքն բժիշկ մը ինձ կը պատմէ թէ՛ ամէն գիշեր ժամը 2ին սովորական պողոտաւորներ զինք խոր քունէն կարթնցնեն, Պատուհանէն կը դիտէ որ հայ երիտասարդներ խումբ խումբ ինքզինքին Չամբճա և կամ Իսկիստարի լեռները կարծելով «ալ՝ զբտա պեր ետղմուր» ի մանիկետով կը թնթացնեն փողոցները ամօր յի մեզ: Ընթերցողները անշուշտ կը հասկնան թէ մեր խօսքը չափաւոր գործածելու սովորութիւն ունեցողներուն վրայ չէ որբան անոնց՝ որ մըլի օղիին՝ անոր սիրոյն համար՝ իրենց ընտանիքին ու զաւակներուն անգործութիւնը ոտնակոխ կընեն:

Եթէ բժիշկ ըլլայի, շատ հաւանական է որ այդ չափաւոր գործածութիւնն ալ նկատելով արգիլէի որ ամիկ ժողովուրդը միշտ իրեն տրուած թոյլտուութիւնէն կը չփնայ ամէն բանի մէջ, և այդ թոյլտուութիւնը չը բաշուիր յաճախ չարաչար գործածելէ, ինչպէս մեր Լսարանի անգամներէն ոմանք:

Այսօր բժիշկ մը համոզուած ըլլալով որ օրական երկու սիկար ծխելը և կամ ճաշէն առաջ մէկ երկու գաւաթ օղի խմելը փաստակար չէ թերևս օգտակար, դարձեալ հրաման չի տար:

Տր. Գիթիլիան իր ժամանակի բժիշկներուն մէջ էն անաշուն էր որ կ'արգիլէր խոտի օղիի գործածութիւնը: Օղի խմել թոյն խմել հաւասար բաներ են կըսէր: Բայց և այնպէս ինք կը գործածէր օղին:

Ճշդիւ օրմը երբ մէկը իրեն դիտողութիւն կըներ իր օղի խմելուն: — Զաւակս կ'ըսէ, եթէ քեզի արտօնութիւն առաջ մէկ վաւաթի, վատահեմք մէկը երկուքի և երեքն ալ չորսի պիտի վերածես: Վերջը վերջն ալ դառնաս զիս պիտի սնիծես որ քու վեղձուններդ ապարեղ տուած եղայ: Որովհետև ուսիկ ժողովուրդը իրեն արուած բոյնտուրիսէն կը շփանայ ու չարաչար կը գործ սծ գայն:

Վերջապէս փոխ առնելով նոյնինքն Տր. Հերարէ և Տր. Վերնէյէ կըրնամ ըսել թէ օղիի մարութիւնը՝ մարդս կառաջնորդէ թորախոտի գերեզմանը, ուր կ'երթան ոչնչանալ նաև իր սերունդները:

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ

Կ. ՊՐԻՒՍ 28 Ապրիլ 1901

Պոլսոյ ազգային հրատարակին վերայ օրուան կարևոր խնդիրներէն մին եղած է՝ Պէրպլեան վարժարանի Յոբելեանի խնդիրը:

Անշուշտ ազգային թերթերու մէջ կարգացած կըլլաք Օրմանեան Պատրիարքի կոնդակը՝ Պէրպլեան վարժարանի Յոբելեանին առթիւ՝ որուն մէջ Օրմանեան Սրբազան Պէրպլեան Ռէթէնսի գրագիտական տաղանդը, ուսուցչական ապարեղին մէջ ցոյց տուած կորովը, իր սոկուն և արդիւնաւոր գործունէութիւնը ի վեր հանելէ վերջ սապէս կեզրակացնէ:

Միւր Ազգին մէջ լաւ ձեռնարկներ յաճախ երեցած են, այլ յաջողութիւններ և տեղութիւններ ցանցառ, որով իր տեսակին մէջ նշանաւոր կը ներկայանայ բոսնի և հինգ տարի միշտ զարգացուն ընթացքով շարունակուած վարժարան մը որ

«չունի մեծագումար կտակներու նախանձ» «չի և անվանոյ յենարանը:

«Կը հրատարակն ուրեմ Պէրպլեան վարժարանի երախտաւորապ նախորդ, Պէրպլեանի հաստատութեան շնորհապարտ «ծնողները, և Պէրպլեանի արժանեաց զընահատող ազգայիններ, այդ կերպով և այդ նպատակով արտայայտել իրենց ըզգացումները, հաւատակ իրենց իղձերը և քաջալերել արդիւնաւոր գործիչ մը: Սուսորական եղող զանազան առարկաներու «ընծայարարութեան կը նախապատուի այս անգամ ուղղակի գրասխան նախարարութիւնը, որ միջոց պիտի ընծայէ ընդարձակ կը ազգագրութեան հաստատութիւն մը և ապահովել կարևոր ձեռնարկ մը, և ցուցնել թէ Ազգը գիտէ պատուել արեւմտաւոր անհատներ, գիտէ քաջալերել արժանաւոր «ձեռնարկներ, գիտէ ապահովել արեւմտաւոր հաստատութիւններ և բարեոյն ու օգտակարին ընծայել իւր նպատակն ու ձեռնառութիւնը: Մենք ալ պատրաստ եմք «միջնորդ լինել և հսկել այսպիսի վեղցեղիկ «նպատակի մը իրականացման, ստանալ և հասցնել բոլոր բարեւեր ազգայնոց նպատակները, որ պէտք է օր առաջ հաւաքուին, «որպէսզի հնար լինի մտադրեալ նորոգութեանց ու ընդարձակութեան ձեռք գարնել «և ժամանակին հասցնել որոշեալ միակ ու «մեծ նուէրը, որ իւր նշանակութեամբ և «արդիւնաւորութեամբ յարմարագոյն և սուս «ողագոյն կոթողը պիտի ըլլայ Ռէթէնս «Պէրպլեանի պատուոյն»:

Օրմանեան Սրբազան իր կոնդակի վերջաւորութեանը մէջ կ'օրհնէ և կը մաղթէ որ անստան մնան ազգային հաստատութիւններ, կ'օրհնէ և կը մաղթէ որ շատնան ու վարպետան ազգային կրթարաններ վայելելով բովանդակ Ազգին համակրութիւնը և ձեռնտուութիւնը:

Հաս չը պիտի արտագրէի կոնդակին այս հաստատմանը, որոնք ինչպէս ըսի Պոլսոյ ազգային թերթերուն մէջ սպասած ըլլալով Ձեր ուշադրութենէն վերիպածը լլալու չեն, բայց իմ արտագրելու բուն նպատակս է՝ չեղտել այդ հաստատմանը ինքն ըստինքեան ունեցած նշանակութիւնը:

Անշուշտ Օրմանեան Սրբազան նիւթէն չեղած չըլլալու դիտումով է որ — բանի որ կոնդակին նիւթը Պէրպլեանի կեանքը կը շօշափէր միայն — մեր մէջ հանրային ձեռնարկներ ու տեղական չըլլալու պատճառներուն վը

բայ ըստարժանի մանկու որ նոր հիվանդանոցում հարց մըն է:

Թողլ տրուի ուրևն ինձ փակագիծի մէջ երկու խօսք արտասանել սոյն կենսական հարցին նկատմամբ:

Մեր մէջ հանրային գործերը յաջողութիւն և անարդիւն չեն ունենար, կամ այն է որ՝ գործին ձեռնարկողները սովորաբար սէր չեն, և կամ այն է որ՝ ժողովուրդը անբարեկամ անարարութեամբ և ցրտութեամբ կը վերաբերուի դէպ ի այդ ձեռնարկները:

Տեսնենք թէ ասոնց ո՞րը ճիշդ է, երկու կողմանէ ո՞րն է յանցաւորը իմ փորձառութիւնս և շրջահայեաց ըմբռնումս կը հրամայեն ըսել թէ՛ այդ անյաջողութեան մէջ ասելի պէտք է մեղադրել ժողովուրդը իբր յանցաւորքան թէ հանրային գործիչը:

«Մասին»ը, «Արեւելեան Մամուլ»ը «Մանրագիտի Էֆրեար»ը, «Ճերմակի Երգիչ»ն իբր թերթ 30—40 տարիներ բոլորած են այսօր: Միթէ փաստ մը չէ ասիկայ թէ յարատեւութեան ոգին նշանակութիւն մը ունի մեր մէջ: Բացառութիւն ամէն ազգի մէջ կը գտնուի: Եթէ ժողովուրդը քաջալերած չըլլար այդ հիմնարկութիւնները՝ անշուշտ ատոնց վարիչները, որքան սովորաբար սէր ըլլային, չի պիտի կրնայի տեսնուիլ անոնց պարտաւորութիւնը:

Ուրիշ անգամ ասելի խօսելով այս նիւթին վրայ՝ կաւեցնեմ թէ՛ Գարակէօզեանի խորասանձեան էֆէնտիները Պէրպէրեանի նախկին սաներ՝ մեծ մղում տալ կը խօստանան յոբելեանի ձեռնարկին:

Երանի՛ թէ մեր Հայկական կըրթարանն ալ յարատեւած ըլլար:

ՅՈՒՆԱՏ ՊԱՏՐԻԱՐԻՍ ԿՐԹԱՐԵՑՈՒՄԸ
Սհաւաստիկ կարեւոր խնդիր մ'ալ Յունաց համար որ բարեբաղդարար ասանց ազմուկի փակուեցաւ:

Սինոք և Ազգային ժողով՝ դժգոհ իրենց արեւելեան Պատրիարքէն ուրուն անկարողութիւնը փորձով ապացուցուած էր, հրատարակեալ տուր ըսին, հակառակ պարագային զքեզ պիտի հրատարակենք, բան մը որ քիչ անպատուարքը չը պիտի ըլլայ: Պատրիարքը դէմ գրաւ, բայց երբ Սուլթանին կողմէն հրատարակուեցան պիտոյրքուն տեսաւ, յոյսը կտրած քաշուեցաւ:

Պատրիարքը մեծ յոյս ունէր որ Սուլթանը պիտի պաշտպանէր զինքը՝ Սինոքին և Ազգային Պատրիարքարանի ժողովներուն դէմ: Մինչև իսկ ճնշման տակ եղած ստեղծ, կըսեն թէ Սուլթանին նամակ մը գրելը, Սինոքի ու Պատրիարքարանի ժողովները թուրք կառավարութեան իբր սխիւթութեամբ ներկայացուցել է:

Սուլթանը Պատրիարքին գրած նամակէն այնքան յուզուեց է որ քիչ մնայել է իրատեք սոյ Պատրիարքին, եթէ Ռուսաց զեպանատան առաջին թարգմանը իր հանրածանօթ տիպուճատութեամբ Սուլթանին ախանջին երկու խօսք չի փոխաց եղեր:

ՁԵՐԱՍԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայ և թուրք շարունակ ձերբակալութիւնները պակաս չեն: Քաղաքական յանցաւորներ և կամ անմեղներ ձերբակալուելը սովորական բան մը դարձած է Պոլսոյ մէջ, մինչքան օտար երկրներու մէջ մէկ անմեղ մը անդամ ձերբակալուելը տարօրինակ դէպք մը կը համարուի:

Չէ մի որ կըսեն, աւելի լաւ է հարիւր ոճրագործ անարար տրձակել քան թէ անմեղ մը կախաղան հանել և կամ դատապարտել:

Վերջերս Պոլսոյ Վերաբնիչ ատենի ընդհանուր դատախազը ձերբակալութեան հրաման տուաւ Երասայ փոխազգ հետեւեալ անձինքներուն դէմ: Սիւլէյման Մէմուտ, առաջիկ Պորտի Տէրօղլ փոշա, «Չէրմէ» լրագրի տէր և տնօրէն: Բեամիլ պէյ, նախկին հիւպատոս Ժընէվի: Էտհէմ Բահի, բըժշկական ուսանող: Նայիմ Կաէկուտ, պաշտօնային Ձմիւռնիոյ մտքաստան:

Ասանք եթէ մինչև տար օր (յոյտարարութեան թուականէն) Պոլսոյ չը վերադառնան, օրէնքի դէմ իբրև ապրտամբ պիտի դատուին, և իրենց կալուածները պիտի գրաւուին:

ՄԻՋԱՊՄԱՅԻՆ ՓՕՍԹԱՆ

Սուլթանը ինչ որ ալ ընէ չը պիտի կրնայ յաջողիլ միջազգային փոշման վերջնելու, որ ինչպէս դիտէր կալովայի Միլլէթ խանն է:

ՏՕՔԹ. ՆԵՎՐՈՒԶ

Իր բնակութիւնը փոխադրած է Եարա-էլ-Մանախ, նորաչէն Պանք Օթոմանի դէմ կարգը Մէգոն Հէլլէր, թիւ 28 առաջին յարկ:

Հիւանդ կընգունի ըստ տաճարին սո. ժամը 8 էն 9. կէս օրէն վերջ ժ. 3 էն 5:

ՍԹԱՆԵՅԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

Շատ ժամանակ չի կայ երբ գորչակութիւն կընէր Սթանլէյ՝ թէ չը պիտի գտնուի երկիր մը, լիճ մը և կամ կեզրոն մը Ափրիկէի մէջ որ անձանթ մնայ տասն և կենրորդ դարուն վերջը:

Տիեզերահոգակ երկրախոյզը այնքան անկասկած էր իր հեռատեսութեան անխալ ըլլալուն, և այնքան համարում ունէր իր գուշակութեանը վրայ, որ մինչև անգամ չէր վարանէր գրաւի մտնել:

Արդարև Սթանլէյ եթէ գրաւ դըրած ըլլար, գրաւը անտարակոյս պիտի շահէր, ինչու որ իր գուշակութիւնը անսղի չէր: Այն անհուն անջրպետները որ Ափրիկէի աշխարհագրական քարտէշին վրայ անձանթ տեղ կը գրաւէին այսօրմէկ մէկ նշանակութիւն ստացած են:

Ահաւաստիկ մտաւորապէս Ֆրանսայի և Անգլիայի՝ Ափրիկէի մէջ ունեցած կալուածներու ցանկը, ըստ «Թայմզ»ի:

ԱՆԳՂԱՍԿԱՆ ԿԱՆՈՒՄՈՒ

Գափի գաթականութիւն: Նաթալ և Զուլուանա (Զուլուանու երկիր) Պազիթթանա:

Պիբոնանանտ. Թոնսալալ. Օրանժ. Բոսնիա. Սոմալ, Հիւսիսային Նիկրիտիա. Հարաւային Նիկրիտիա. Լաա և Եօգոպա. Սիերրա Լեօն. Կամպիա. Ռսկոյ ծովագր. Արեւելեան Ափրիկէի գաղթականութիւնը. Միլիոն. Ընդ ամենը 7, 025, 851 քիլոմէթր քառ. տարածութիւն:

ՖՐԱՆՍԱՍԿԱՆ ԿԱՆՈՒՄՈՒ

Ալճերի. Ալճերիական Սահարա. Թունիզ. Սենէկալիա. Կոնգո. Փրոսկի ծովագր (Պոթ տիվուտո) Տահոմէ. Գոնիօ և Կապոն. Պուտանի գաղթական. Պիլիբի, Ուատայլ քանէմ. Սահարա (Թիպէթի մէկտեղ). Սոմալի Ֆրանսական ծովագր. Մատակոսգար. Ընդ ամենը, 9, 774, 616 քիլոմէթր քառ. տարածութիւն:

Այս հաշուով Ֆրանսա Անգլիայէն երկու միլեօն տարածութիւն ասելի ունեցած կըլայ կոր:

ԵԳԻՊՏԱԿԱՆ

Բուն Եգիպտոս Անկո-Եգիպտական Սուտան. Ընդ ամենը 2,614,769 քիլոմէթր քառակուսի տարածութիւն: Եթէ Եգիպտոս և Անկո-Եգիպտական Սուտանի երկիրները Անգլիական գաղթականութեան վերաբերուին օր մը, կ'ըսէ «Թայմզ», այն ատեն Անգլիա Ֆրանսայի հաւասար պիտի ըլլայ:

ԱՐՏԱՒԻՆ ԼՈՒՐԵՐ

ՉԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԵՆ
«Սրանսարտ»ի Պէրլինի թղթակիցը հետեւեալ տեղեկութիւնները կուտայ Չինական կառավարութեան, հաստատուելիք սուղանքին մասին:

Չինական կառավարութեան ծրագիր մը ներկայացուցած են դաշնակից պետութիւնները, կըսէ թղթակիցը, սրուն հոմեմաս յօժարած են հարիւր անգլիական սակոյ փոխատրութիւն մը ընդլ Չինաստանի 10 4 տուկուով, այն պայմանու որ սոյն վերջինը երաշխաւորէ, կամ իր երկրին եկամուտին մէկ մասը մի քանի տարուան համար փոխանցելով, և կամ ուրիշ սպասով միջոցներ յոյնելով: Այդ պայմարին մէջէն 60 միլիոնը պիտի յատկացուի անգլիականներու պահանջած սուղանքին, և 40 միլիոնով Չին փոխարքայներու պարտքերը պիտի հաստատուի:

Չինաստանի Մայր-Թագուհին իբր թէ որչափ է վարչական գործերով այլ ևս չի զբաղիլ:

Այդ որչափ վրայ է որ կազմեր է յանձնարարած մը՝ բաղկացեալ երեք բարձրատիւտան Չինացի պաշտօնատարներէ ուրնք պիտի վարեն գործերը:

ՄԱՆՁՈՒՐԻՍ
Ռուսիա անյաջող ելաւ Մանկութիւն մէջ իր ներկայացուցած դաշնագրութիւնը չի կարենալ ստորագրել տալ Չինաստանի:

ԱՆՃԵՐՈՒՆ
Ապրիլ ամսոյ վերջերը Ալճերի Մարկըրիթ քաղաքին մէջ պատահած զէպքերուն տուժիւ՝ Ալճերի կառավարիչ Մայիս Յըն հետեւեալ կը հեռագրէ Ֆրանսայի ներքին գործոց նախարարին:

«Խաղաղութիւնները միմայն Մարկըրիթի շուրջ տեղի ունեցաւ բարեբաղդարար ատոնց երկրին միւս կողմերը տարածուելու հանդարտեցաւ»:

Պ. Տէլլագասէ որ Ս. Բէթէրպուրիկ զնայած էր, անցեալ շաբաթ օր փոքրիկ վերադարձեր է:

Պ. Տէլլագասէ յայտարարել է Պ. Լուպէի և Նախարարաց Խորհրդին թէ՛ Ռուսիայ և Ֆրանսայի միջև կատարեալ համաձայնութիւն գոյացած է քաղաքական ամէն ինչ իրենցուն նամանակ Չինական ինդուստրիա առթիւ:

Ինչպէս որ ըսուած էր Պ. Վ. Ռուսո հանդերձ ընտանեօք Իտալիա պնայած է, որ շաբաթ մը մնայէ վերջը պիտի վերադառնայ:

ՄԱՍՄԱՆԱՐՈՒԹԻՒՆ Ի ՌՈՒՄԻԱ

Նիւ-Եօրքէն կը հաղորդեն թէ՛ Ամերիկայի այլ և այլ նահանգներէն 2,000 մօտ Սրալ ոչնչակիւններ (Նիւհիսթներ) հաւաքուել են Նիւ-Եօրքի շրջակայ մէկ քաղաք մը՝ ուր իշխան Իրալուպի՝ Ռուսիոյ արդի կացութեանը վրայ ատենախօսութիւն մը բրեր է: Որոշուել է բողոքել կառավարութեան արդի միապետական բռնութեան դէմ, որ մէկ օրէն միւսը անմիջական կերպով բարեփոխելու պէտք ունի:

Արդարև միապետականութիւնը հին բարբարոսական գրութիւն մ'է որ այսօր բովանդակ Եւրոպայէն վերցած է: Չիկոյ երկիր մը Եւրոպայի մէջ որ միապետական գրութեամբ կառավարուի ի բաց առեալ Ռուսիա և կէս մընալ Թուրքիա — սոյն վերջինը գունէ գրաւորապէս ընդունած է սահմանագրութիւնը — մայն թէ Համիտի մը քմահանգքէն կախեալ մնացած է անոր գործադրութիւնը:

Եւրոպայի բոլոր պետութիւնները, արդէն ի վաղուց ընդունած են Սահմանադրական գրութիւնը և իրենց երկիրներուն մէջ մտցուցած են այդ գրութիւնը՝ նկատելով իբր միակ միջոց իրենց երկրին անդորութեան, հիմնական գարուս մէջ:

ՕՏԷՍՍ

Պէրլինէն սրուած հեռագիր մը կըսէ, «Ռուսիան եկած տեղեկութիւններէն կիմացուի որ կացութիւնը հեռագրեալ ասելի կը ծանրանայ և վերջին աստիճանի սպառնական յեղափոխութեան մը կերպարանքը կառնէ: հարիւր հազարէն աւելի գործատուները գործաւու ըրած են, խռովութիւնները կը շատնան համալսարանական բոլոր քաղաքներին մէջ, Վլա-

պորկի մէջ խառնութիւնը կողպտուեցաւ, Օտէտտի մէջ բանտերը առանց-նեկով լցուած են, Վարչաւայի մէջ 15,000 հոգի ձերբակալած են: Դա-սախտութիւնները դադարած են մինչեւ Սեպտեմբեր ամիսը: մ.ձ յուզում կը տիրէ Բիէլլի Մակուտի և Բէթէրու-պուրի մէջ:

13 հազար ոտորագրութեամբ աղեր-սագիր մը գրկուեցաւ Չարլիս իրմէ խնդրելու համար որ Սահմանադրու-թիւն չնորհէ Ռուսիային:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ն. Բ. Խրախի գահակալութեան տարեգարծին առթիւ Յունիսը 3ին էղպէթիէի պարտէզին մէջ արուած լուսավառութեան հանդէսէն 150,480 եդ. դահ. ողջ հասոյթ գոյացած է, որուն 82,148 դահեկանը ծախքին եր-թալով, մնացեալ գումարը 68,332 դահեկանը զուտ հասոյթ եղած կըլլայ: Այս գումարէն 660 սակի եզրկա-րհիւրի բարեկործան ընկերու-թիւններուն բաժնուեցաւ հեռակալ կերպով:

Իսլամ բարեկործան ընկ. 223 եդ. սակի Հրէից բարեգ. 33 եդ. սակի Աւստրո-Հունգարիոյ բարեգ. 33 եդ. սակի Յունաց բարեգ. 23 եդ. սակի Յոյն-Կաթոլիկ բարեգ. 23: Մէնտֆի-յէի ձրի վարժարաններուն 25. ևն:

— Եղիպտական թղթատան Վար-չութեան 1900 տարւոյ տեղեկագիրը երեկ հրատարակուեցաւ:

Անցեալ տարուան 29,920,000ին փոխարէն այս տարի 31,900,000ը կը հասնի Եղիպտոս մտած և ելած նա-մակներուն թիւը:

Նոյն տեղեկագիրն համեմատ, Ե-գիպտոս հրատարակուած լրագիրնե-րուն թիւը 103ի կը հասնի որուն 60 արարերէն, 32 երոպական լեզուաւ, 1ը հոյերէն և 7ը յունարէն լեզուաւ:

— Ի նպատակ հնգկաստանի սովերոյ Եղիպտոսի մէջ հանգանակութիւն մը բացուած էր որոյ տրգիւնը 613 ազդ, սակի, Լանտրա զրկուած է իր հասցէին յանձնելու համար:

— Սուլթանի կողմէն Չինաստան զըր-կուող իսլամ պատգամաւորութիւնը երեկ Ազիբանդիա հասաւ Ռուսու-կան շոգենաւով: Երեկոյեան թռեւնով ուղղակի Սուէզ մեկնեցաւ պատգամա-ւորութիւնը, ուրկէ Մայրագոյն-Արեւելք պիտի մեկնի:

Պատգամաւորութիւնը կը բազկա-նայ հեռակալ անձիքներէն: Միլի լի-վա էնվէր փաշա, երկու իւլէ-մա, մէկ եավէր, թարգման մը, և երկու զորք:

— Օսման փաշայ Պէարխան և Գազի Մուխթար փաշա, Երոպա մեկնեցան:

Վ Ր Ի Պ Ա Կ

Կարգալ այսօրուան «Մեր Օղեմու-ները» խմբագրականին երկրորդ սի-նակին երկրորդ պարբերութեան վե-ցերորդ սողին իբր շարունակութիւն «Ինչպէս նոս էղպէթիէի մէջ» ո-

րուն օղիին համար վերջերս տեղե-կան թիւթ մը ղէզղաւ կընէր հայ ժո-ղովորդին, ամօթով:

Հ Ե Ո Ա Գ Ր Ա Կ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ՄԷԼՊՈՒՐՆԷՆ. — Անգղիոյ գահա-ժառանգ Գուրը և Գրուհին Մէլչու-րն հասան: Հարիւր հազարէ աւելի ականատեաններ փողոց խռնուած էին:

ԹՈՒՆՍՈՒԱԼԼԻ. — Պօէրնիւր Մա-յիս 6ին երկաթուղի մը դժէն հանե-ցին, սնոր մէկ մասը կրակի տալին:

Ապրիլ ամսոյ մէջ հեռակալ կորու-սար ունեցած է անգղիական բանակը: 8 սպոյ և 122 մարդ սպանուած: Բուան սպայ և 206 մարդ վիրաւորուած:

ՄԱՆՉՈՒՐԻՍ. — Եանիկայէն «Թայ-մզ»-ի կը գրեն թէ՛ Չինաստան օտար պետութիւններու յայտարարած ըլլայ թէ՛ այսուհետեւ Մանչուրիան բոլոր երկիրներուն բաց պիտի ըլլայ:

ՊԷՊՍՊՈՒԿԷՆ. — Չարը, Յրանալի արտաքին գործոց նախարար Պ. Տէլ-գաստէ, Ռուսիոյ արտաքին գործոց նա-խարար Պ. Համարոֆ, կատարեալ հա-մաձայնութեան յանգած են այլ և այլ քաղաքական խնդիրներու վրայ, մէջ որոց Մակեդոնական խնդիրը ևս կը գանտի:

Կ. ՊՈԼԻՍԷՆ. — Ռուսական զեռայն Պ. Չենովիէֆ մեծ ջանք ի գործ դը-րու ուր Մէլչուրի մէջ մահուան դա-տապարտուող 19 Պուլկար խռովարար-ները ազատէ, չի կրցաւ յաջողիլ:

ՍՕՅԻՍ. — Նախարարները հրամա-րած են տրգի կայութեան առթիւ:

Մայիս 7 թիւ հեռագիր մը կը հա-ղորդէ թէ Երկաթուղի մէջ մեծ հրդեհ մը ծագեցաւ որ կը տեւէ երեկուրէն ի վեր:

ԳՈՐԱՆՍԷՋԻ ՈՃԻՐԸ

(ՀԱՅՐ ՄԸ ՈՐ ԻՐ ՀՆԵՂ ՋԱՆԱԿՆԵՐԸ ՄԻՍՍԻՆ ԿԸ ՍՊԱՆԵԷ)

Փարիզի շրջակայ գիւղերն միտն մէջ անցեալները ոճի մը տեղի ունեցած է այն-բան զարհուրելի, այն-բան ահաբեկ որուն պատճառները լսել ու չի բառնիլ անկարե-լի է:

Գորանսէյ գիւղին բնակիչներէն, արուես-տով երկրագործ Ետուարտ Պոկէն անուն մէկը, երեք տարի է ի վեր է որ իր կիներ կորսնցուցած էր:

Պոկէն հինգ զաւակ ունէր, էն առջինը կը կը կոչուէր Յուրա 16 տարեկան աղջիկ մը որ կը կառավարէր տնական գործերը հի-անալի տանտիրութեամբ:

Օր մը Պոկէն՝ ըստ սովորութեան իր զաւակներուն հետ միասին ձաշէյ վերջը փողոց կ'իկնէ, սրճարանը բաւական առնն մնալէն վերջը, երեկոյեան ժամը 11ին ա-տենները ընկերակցութեամբ բարեկամի մը տուն կը վերադառնայ:

Գանի մը ժամ անցնելէ վերջը, յանկարծ Պոկէն որքան ձայն ունի մէջտեղ կը ձգէ, զուտ զրացի՝ տուն կը թափին, կը տեսնեն Պոկէն՝ տանը բակը, գետին փռուած, վի-րաւորեալ լինակի մէջ կը հեծէ: Պոկէն թիչ մը շունչ կ'առնէ ու կը սկսի յուզմունքով մը զրացիներուն պատմել իր զլխուն եկածը: Իբր թէ երկու անձանց մարդիկներ իրեն հետ կատաղի կերպով կոտի բռնուեր ու

լու մը տփեր են դինքը: Չերկարենը իր կրած հարուածներուն ցաւն ինքզինքը անտնկ մը կորսնցուցեր է որ ժամը 3ին հագիւ հազ սթափեր ու կրցեր է բորսուե-լով ինքզինքը գոտը նեախ, սրպետի ձայնը զօրուն կարնան լսել:

Գրացիները գունդն ներս կը մանեն, ան ինչ զարհուրելի տեսարան մ'է որ կը պարզուի առաջին:

Մի հարցնէր, սենեակին մէկ անկիւնը կը տեսնեն անկողնոյ մը վրայ փռուած Լօ-անսին գիտեր եօթը տարեկան: Ի՞նչ մը անդին ուրիշ անկողին մը, հոն ալ Լօնի և Պէատրիի գիտիները, երկու պզտիկ աղ-ջիկներ: Ասանց մտքը օրորոցին մէջ շորս տարեկան մանուկ մը: Ի՞նչ մը անդին ուրիշ գիտի մը, արկունքաթաւ ստ ալ խեղճ Յուրայինը, որ տղոց էն առաջինն է:

Կ'երեկ թէ Յուրոյ այնքան կատարու-թեամբ՝ պաշտպանը աշխատած է իր բոյրը-րը և եղբայրները, որ արեւն թափելով ա-ւանդեր է իր վերջին շունչը:

Գրացիները, դեռահար եղած վազկով իմաց կուտան ոտտիրանութեան, որ վայր-կենին՝ կը հասնի ու հարցաքննութիւն մը կը կատարէ: Հարցաքննութեան միջոցին՝ կասկածներ կը ծանրանան նոյն ինքն այդ խեղճ զաւակներուն հօրը, Պոկէն վրայ-այն Պոկէն որ օճի խորամանկութեամբն ալ կաշխատէր ինքզինքը վիրաւորուած ձե-ացնելով ծածկել իր ամենանողկալի ոճիբը:

Սպանութեան շարժաթիւր զարձեալ կ'իկն մը եղած է: Պոկէն մտաւայ գիւղէն կին մը կը սիրէ և կուզէ հետը ամուսնա-նալ: չար կինը՝ կ'աւարիկ թէ այնքան բազ-մաթիւ զաւակներ ունի ատանկ բազմու-թեան մէջ հոնգիստ չի կրնար ընել, ճիւղ հայրը իր նպատակին հասնելու համար կ'անէ կացիներ ձեռքը ու զաւակներուն հինգ նալ կ'ոպաննէ, մէկը ողջ չի ձգեր:

ԺԱՄԱՆԱԿ ՆՈՐ ԶԱՆՈՒՄ

ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ Պ Ա Ր Ի Ջ Ո Ր Մ (ՅՐԱՆՍԱ)

Ժամանակը և երկարամեայ գրական փոր-ձառութիւնը մեզ խրախուսուած են հիմնել Եւ-րոպայի մտաւորական առաջակարգ կենտ-րոնում, Պարիզում մի նոր հայկական գրա-կան հանդէս:

Սնկախ, զուտ գրական հանդէսի պա-հանջը երբէք այնքան զգալի չէ եղել հայ ազգի մէջ, որքան այժմ, երբ նրա մայրե-նի լեզուն սկսել է ենթարկուիլ կորստեան եւ մահուան վտանգին, երբ նրա գրական կեանքն սկսել է մաշուիլ, ծխուիլ ենթար-կուիլ նոր արտագրութեանց անընդունակ լինելու վտանգին:

Գրականութիւն իտորք Եւրոպայում, գրական կենտրոնում և զըպրոցում, բոլորովին այն չէ՛ նշանակում, ինչ որ հատկացվում է մեր ազգի մէջ:

Եւրոպական գրականութիւնը գրականու-թիւն է, որովհետեւ նրա մէջ ամենից առաջ կայ դիտութիւն: Եւրոպական գրականութիւնը ճըշմարտութեան ջահն է, եւրոպական գրա-կանութիւնը կեանքի գիտութիւնն է, նրա ուսումնասիրութիւնը, նրա զարգացման պատ-մութիւնը, նրա հոգեբանութիւնը, նրա փի-լիսոփայութիւնը, նրա եզրաբանութիւնը, այ-սինքն այն ներդաշնակութիւնը, որ կազմում է այդ կեանքի պոզիտիւն:

Հայ պօետները, վիպագիրները, մասե-նագիրները, թատերագիրները, շատ քիչ բա-ցառութեամբ լուր են եւ հեռացել գրակա-նութիւնից, այն պատճառաւ որ կուսակցա-կան պայքարը մեր մասնիկ ու գրականու-թեան մէջ ստորացրել է ստղանիկ արվը-նները ստղանիկ տարով ազիտութեանը, որ «կուսակցութիւն» անուանուած շահանկիր ազանգաւորութեան ամենամեծ զէնքն է:

Ահա մօտ տասն տարի է որ հայ ազգին մէջ աչքի ընկող վիպական, գրամատիքա-կան, բանաստեղծական, կրթութեական, ու պատմական երկերի թիւն օր բտ օրէ սկսում է պակասիլ. մինչդեռ հայ ազգին մի բանի տարիներ առաջ այդպիսի երկեր սուղ հե-ղինակներ ողջ են:

Հայ գրական կեանքին մէջ տաժանակիր աշխատանք կրած ու սպարիզից յուսահատ հեռացած հայ հեղինակների օրինակը վհա-տեցուցիչ սպարութիւն է արել եւ նորա-գոյն սերնդի վրայ, որի մէջ գտնուած տա-զանքները իրենց բնածին ընդունակութիւ-նները սկսում են գործադրել առեւարական և պաշտօնեական սպարեղններում, հետո մնալով գրական աշխարհից:

«ԺԱՄԱՆԱԿ» գալիս է, սրպէս զի հայ հեղինակների սպարեղ հրաւիրէ նոր պայ-մանների մէջ, ազատ թողնելով նրանց սա-ղանքները և մտքի թռիչքը կուսակցական անմիտ բռնութիւնից և ջանալով ապահովել նրանց քրտինքի վարձն այնպէս, ինչպէս ապահովուած է կենսական բոլոր սպարեղ-ներում ամեն մի արգար և սուրբ աշխա-տանք:

«Ժամանակ» գալիս է փնտրելու ու գրու-նելու մեր նորագոյններնի մէջ այն սա-ղանքները, որոնք սպարիզի պակասութեան պատճառով՝ չբացուած թառամում են և մնում անմասն բաղաբարթութեան աշխարհի կեանքին:

Այդ նպատակով՝ ժամանակը ըսյն և ազատ բանում է իր սինակները հայ յայտ-նի հեղինակների առաջ և նրանց հետ ա-պարեղ է հրաւիրում այն ամենքին, որոնք զգում են իրենց սրտում կայծ ու գրական կոչումն ու խոստանում է ամենայն ջնքը-թեամբ վերաբերուել նրանց զգացմունքներին և յարգել նրանց համազունները:

Մի և նոյն ժամանակ ժալմանակը գա-լիս է, սրպէսզի հայ ժողովրդին հայ լեզուով ծանօթացնէ եւրոպական ամենըստի երկե-րի հետ, որ հեղեղի պէս ամեն օր լցնում են եւրոպական գրական աշխարհը և որից անմասն է մնում հայ ժողովուրդը:

Այդ նպատակներով «Ժամանակ» իմ-բագրութիւնը գիւղէ է ընդդէմ հայ և բազ-մաթիւ եւրոպական յայտնի գրագէտներին ու նրանց մեծամասնութիւնից ոչ միայն ստա-ցել է սիրայօժար համաձայնութիւն, այլ և բաղմամբ ընտիր երկեր, որոնք գանձում են խմբագրութեան պարտքը:

Եատերը կը հետաքրքրուին թէ ինչ պի-տի լինի «Ժամանակ» ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ: Այդ բար բոլոր բառերից աւելի անպիտակ-ցաբար ու կեղծ մտքով է գործածվում հայ-կական յղանակներում: Մոտացուել է ճշմար-տութիւնը, գիտութիւնը, գեղարուեստը ու նրան փոխարինել են «ազատամիտ, յետա-գիմական, յասաջիմական» անմիտ բառերը:

Սա մի կեղծ գրութիւն է, որ ստորացրել է հայ ժողովրդի միտքը, ու պէտք է հայ ազգի միտքն ազատուի այդ սարիւթից:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ, ԳԻՏՈՒԹԻՒՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍ: Ահա ԺԱՄԱՆԱԿ ուղղու-թիւնը: Ճշմարտութիւնը հայ ազգին կտայ իրաւունք բաղաբարթութեան ազգերի ընտա-

ներքին մէջ մտնել, գիտութիւնը հայ ազգին խիստական ազատութիւն կտայ. որովհետեւ առանց գիտութեան չկայ ազատութիւն, որովհետեւ ազատ մարդը չէ կարող ազատ լինել. գեղարուեստը հայ ազգին կտայ բարձր հասկանալի գոտարձութիւն:

Մեզ ուզում են հաստատունը որ հայ ազգը այլապես է, որ նա գտնուի է մահաւան առաջին շրջանի մէջ ու արդէն սարքաւորուի է, որ նա ոչ բարոյական ազգայն չունի: Իսկ մենք կարծում ենք որ հայ ազգը հիանդ է ու հիանդ է այն սուկայի գերմարդկային տառապանքներից որ նա մինչև այսօր կրել է:

«Ճամանակ»ը ցանկանում է փնտռել ու սիրել այն ամենն, ինչ որ այդ կազմաւորը միացնում է ու կազմուցում է ոչ այն, ինչ որ այդ կազմաւորը յոշտում է, բաժանում է թուլացնում ու այդ նպատակով ի դրո՞ւմ է հրաւիրում այն բոլոր հայ այժմերը, որոնք ցանկանում են և իրենց մէջ կարողութիւն են պոստ պիտանի լինել հայ ազգին ու մարդկութեան:

«Ճամանակ»ի խմբագրապետ ու սնօրէն է Պ. Ս. ՀԱՌՈՒՄԻԱՆ

«Ճամանակ»ի առաջին հասարակարկի վիճակն այն բաժանորդներին, որոնք կատարագրութիւն մենչև ներկայ թուականի յունիս 10ը (ն. ա): Այդ թուականից յետոյ ստորագրուողներին խմբագրութեան չէ խոստանում Ա թիւը, որ պիտի ապագրուի այն բանակութեամբ, ինչ բանակութեամբ ստորագրուողներ լինին մինչև յունիս 10 (ն. ա): «Ճամանակ»ի Ա համարը Պարիզի փոստին կրանձնուի ճիշդ Յուլիսի 1-ին (ն. ա):

1901 Յուլիս 1-ից Պարիզում կուկար լոյս տեսնել հայերէն լեզուով

«ՃԱՄԱՆԱԿ»

Հանդէս գրական, հասարակական, գեղարուեստական, քաղաքական:

ՃԱՄԱՆԱԿը կունենայ այն բոլոր բաժինները, ինչ որ ունին եւրոպական գրական հանդէսները. առանձնապէս ուշադրութիւն դարձնելով գիտնական ու գեղարուեստական բաժիններին վրայ:

ՃԱՄԱՆԱԿին աշխատակից լուր արատականութիւն են յայտնել բազմաթիւ հայ և եւրոպացի յայտնի հեղինակներ, որոնց երկերը արդէն ստացել է խմբագրութիւնը:

ՃԱՄԱՆԱԿը արդկացած կը լինի 3 սպաղարական թերթերից (80 էրես La Revue et Revue des Revues հանդիսի դերով):

ՃԱՄԱՆԱԿի առաջին համարը լոյս կը տեսնի ճիշդ 1901 թուականի յուլիս 1ին և ներկայ թուականին կը հրատարակուի երկու ամիսը մի անգամ, այն է յունիս 1. սեպտեմբեր 1 ու նոյեմբեր 1. Իսկ սկսած 1902 թուականի Յունուար 1-ից կը հրատարակուի իւրաքանչիւր ամիս:

Հարկ եղած դէպքերում, ՃԱՄԱՆԱԿը կը լինի պատկերազարդ և կը սպաղարէ եւրոպական երկերի բնագիրը եւրոպական լեզուներով, հայերէն թարգմանութեան հետ միասին:

Բացում է բաժանորդագրութիւն 1901 և 1902 թուականներին: Բաժանորդագրութեան պայմանները պարզուած են հետեւեալ աղիւսակի մէջ

Բաժանորդագրութիւն 1901 բուականի (կիսամեակ) Ռուսաստան 3 ուրլի. Անգղիա 7 շիլին,

Ֆրանսան, Պուլիարիա. Պարսկաստան, Ռումանիա. Թիւրքիա, Եգիպտոս. Յունաստան, Աւստրիա. 8 ֆրնք.

Ամերիկա 1 զոլար (ուկի) Բաժանորդագրութիւն 1902 բուականի (12 զիւրլի) Ռուսաստան 10 ուրլի Անգղիա 1 ֆնտ. ստերլին

Ֆրանսա, Բուլղարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թիւրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա. 25 ֆրն. Բաժանորդագրութիւն 1901 և 1902 բուականների համար (13 զիւրլի) Ռուսիա 12 ուրլի Անգղիա 1 ֆնտ. ստերլ. և 7ը շիլ.

Ֆրանսա, Բուլղարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թիւրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա, 30 ֆրնք. Ամերիկա 6 զոլար Ամենայն տեղերից դիմել հետեւեալ հասցեով.

Paris, (France) 64 rue Claude-Bernard Directeur de la Revue « Jamanak » S. Hakhoumian

Ա. Չ. Դ

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը դոհաջուով աալու և մեր ընթերցողներու գիւրութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետեւ մեր թերթը հատով պիտի ծախուի Շաբա Ապտ-էլ-Ապրիլի սկիզբը Պ. ԿԱՐՍՊԵՏ ԵՐԶՆԿԱՅԵԱՆԻ խանութը:

ՏՈՒՌԱ ՄԻԶԻԻԼՄԱՆ (ԻՍԼԱՄԱԿԱՆ ՕՐԷՆՍԵՂԻՏՈՒԹԻՒՆ)

Ս. ՓԱՓԱԶԵԱՆ Սոյն հրատարակութեան առաջին մասը Եգիպտական արգարութեան Գործոց Նախարարութեան կողմէն ներթական վարձատրութեամբ գնա-

հատուած և Եգիպտոսի դատարաններուն մէջ գործածութիւնը պաշտօնապէս ընդունուած է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընդհ. տեսութիւն Ճառանգական օրինաց և ժառանգութեան իրաւանց ծագման վրայ. — Ճառանգութեան պայմանները. — Ազգականութիւն և առաժանները. — Գերութիւն և ժառանգութեան հետ ունեցած կապերը. — Ճառանգութեան զրկող պատճառներ. — Մարդատաններու ժառանգութիւնը. — Տիէթ (մարդու արեան զինը). — Ճառանգութեան մը պարտքը և պահանջը. — Ճառանգորդներու կարգը իրենց աստիճաններով:

Ճառանգութեան օրէնքին արտադրութիւնները սուրյն սուրյն մեկնուած են: Գրքոյկին վերջը գրուած է ցանկ մը որ մասնակի եղանակաւ կը նշանակէ թէ ժառանգութեան օրինական բաժինները ինչպէս կը բաժնուին:

Երկրորդ մասը մտ Ճամանակէ լոյս պիտի տեսնէ՝ Խնամակալութեան կրտակի, Սպանութեան, Արեան Գնոյ վրայ ընդարձակ ծանօթութիւններով: Գին 10 ԴԱՀ. ՈՂ.Ձ

ՊԱՆԳ ԼԻՍՆԷԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՈՐԾԱԿԱՎ ԵՎԻՊՏՈՒՆ

Մ. ՍՍՍՍՅԵԱՆ

Լիոնի հանրաժանութ գրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալն ալ, Տ. ՄԿՐՈՒՅ Սոսոյեան, որ իւր հրատարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վատահոլութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքապետութեան պաշտօնապէս վաւարուած փոխանորդադրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէյի միջոցաւ ամեն տեսակ գրամական և

Վեռտի Ֆոնտիլէի, Վիլ աը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղիներու գործողութիւններ, դանձումներ: Ամական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ստունէն, պահեստի բաժնեթուղի մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափարողները հաճին դիմել Նիւպառի վրայ փաստարան Ռարթարիի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ զըրկել հետեւեալ հասցեին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

ՊԵՆԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ. ԱՍԵՐԻԿԵՆ ԴԵՐԱՎԵՐ ԱՐԱՅ ԵՒ ՏԻՎԱՅՑ ԵՒ ՁԵՆԱԿԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապրիլի մեծ պողոտային վրայ Տայիւայի Սանիլիի դիմացը, Յակիլին ելեկտրական գործիներու վաճառատները:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած լլլալով կը յայտարարենք արդոյ հատարակութեան թէ՛ պատրաստ ենք դոհաջնել մեզ զիմոյ Պատ. յանախորդները, գործի մարտութեան, գիներու չարաւարտութեան և ճշգրտահոլութեան կողմէն:

Մեր գործատեղ այն մէջ կ'աւանդուին նաև ձեզ գիտութեան դասեր ամերիկական ամենալեղիւն կատարելագործուած մէթոտով:

Մանրամանութեանց համար դիմել մեր գործատեղին:

Le Gérant J. MUNIER

Տպա. «Միւրիլին».— Թ. Ս. Փափազեանի

Տ Պ Ա Ր Ա Ն
Թ Ո Ւ Գ Ո Մ Ս. Փ Ա Փ Ա Ջ Ե Ա Ն
Սոյն նորուաղով սպարանին մէջ կը սպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետուներ, մահազգր, հարսանեաց հրաւիրադրեր, կանոնադիրներ, նամակաղլուխներ, պահարաններ, հաշուեցուցակներ են:
Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամով եւ ճաշակաւոր սպաղարութեամբ:
ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ